

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳՅՈՒՂԱՏԱՏԵԾՈՒԿԱՆ ՀԱՅՐԱՄԱՑՉԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 4

Ա. Ա. ՍԱՐԻԿՈՂՅԱՆ

ԳԱՂՋԸ (ԳԱՅԼՈՒԿԸ)

ԵՎ

ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱ ԴԵՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՎԱՆ 1947

7.5

10278

Сирингуяк В. В.

небо в сини-

е 2n.

632.5
U-26

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՐԴ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻ

ԳՅՈՒՂԱՏԵՍՈՒԳՈՆ ՀՈՒՐԱՄԱՉԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 4

ԱՄՈՒՀՎԱՐ է 1861 թ.

Ա. Ա. ՍԱՐԽՈՂՅԱՆ

ԳԱՂՋԸ (ԳԱՅԼՈՒԿԸ)
ԵԿ
ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱ ԴԵՍ



18134
A

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՐԴ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻ

ԵՐԵՎԱՆ 1947

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գլուխունների Ակադեմիայի
Նախագահության կարգադրությամբ:

Հայկական ՍՍՌ ԳԱ պրեզիդենտ Վ. Հ. ՀՈՅԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Պրակի Խմբագիր՝ Գ. Ա. ԶՈՅՉՈՆՅԱՆ

ԱՐՄԵՆԻԱ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ա. Ս. ՍԱՐԽՈՇՅԱՆ
Պօվիլիկա և борьба
с ней

(На армянском языке)
Изд. АН Арм. ССР. Ереван, 1947 г.

Ն Ա Խ Ս Բ Ա Ն

Դյուզատնտեսական բուշմերի բարձր բերքատվությունն ապահովելու գործում խոշոր նշանակություն ունի ագրոտեխնիկական աշխատանքների լրիվ և անթերի կիրառումը: Այդ աշխատանքների շարքում պատշաճ աեղ է գրավում մոլախոսային բուսականության դեմ տարվող պայքարը: Մոլախոսերը, գրանց թվում և պարագիտ մոլախոտերը, խելով կուլտորական բույսերից ջուր և սննդանյութեր, թուլացնում են նրանց աճեցողությունը, զրկում են լույսից և ջերմությունից, նպաստում են հիվանդությունների և վնասատուների ուժեղ բազմացմանն ու տարածմանը և այդ բոլորի հետեանքով առաջացնում են կուլտուրական բույսերի բերքատվության խիստ անկում: Մատինյան չորրորդ հնգամյա պլանը խնդիր է գնում գյուղատնտեսական ֆրմնտի աշխատողների առաջ լայն աշխատանք ծավալել ագրոտեխնիկայի լրիվ և ճիշտ կիրառման ու մոլախոտերի գեց պայքարելու ուղղությամբ՝ սոցիալիստական գաշտերից բարձրորակ և մեծ քանակով բերք ստանալու համար: Այդ տեսակետից Հայաստանում տարածված սուր վնասակար մոլախոտաներից մեկի գաղձի գեմ տարվող անհաշտ պայքարը բերքատվության բարձրացման գործում կարևոր տեղ է գրավում:

ԴԱՂՋԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դաղձը պատկանում է պատառուկների ընտանիքին։ Մի-
ամյա բույս է, բաղմանում է սերմերով և ցողուններով, ունի
բաղմաթիվ տեսակներ և այլատեսակներ։ Գաղձը պատկանում է
պարագիտ մոլախոտերի խմբին, որը զուրկ է արմատից և կա-
նաչ տերեններից, իսկ զբանց փոխարեն ունի ցողունների վրա
իմաստ զարգացած ծծիչներ—հառաստորիաններ։ Այդ հառաստորիա-
ների (ծծանների) միջացով ամբողջապես ապրում է տեր-բույսի
հաշվին։ Գաղձն ունի մանր^Պսերմեր, որոնք ընկնելով հողի երե-
սին, տալիս են մանր նուրբ ծիլեր։ Ծիլերը սերմի էնդոսպիկրմի
նյութերով սնվելով բարձրանում են մինչև 4—5 սմ։ Այդ նուրբ
ծիլերը կատարելով պտուտակածե շարժումներ, փնտրում են
տեր-բույսը։ Գտնելով համապատասխան բույս, փաթաթվում են
նրան, հառաստորիանները ներանցնում բույսի ցողունի մեջ ու
ծծում բույսի պատրաստի մնադանյութը։ Գաղձը լիվ պարագիտ
բույս է։ Գաղձի յուրաքանչյուր տեսակը ունի իրեն հատուկ տեր-
բույսը, որի վրա նա ապրում է։ Այդ պատճառով էլ գաղձը մեծ
վնաս է պատճառում կուլտուրական ցանքերին, հատկապես առ-
վույտի, երեքնուկի, վուշի ցանքերին, խաղողի այգիներին և մի
շաբթ այլ բույսերի։ Գաղձը հանդես է գալիս օջախներով։ Ունե-
նալով արագ աճելու հատկություն, փաթաթվում և ամբողջապես
պատճում է բույսերին և հեշտությամբ անցնում մեկ բույսից
մյուսին ու վարակում նորանոր տարածություններ։ Գաղձը,
ապրելով կուլտուրական բույսերի հաշվին, գցում է նրանց բեր-

քի ոչ միայն որակն ու քանակը, այլև խեղզում մեռցնում է նրանց։ Այս բոլորի պատճառով գաղձի դեմ պայքարը լուրջ և կարեոր ինդիր է։

ԳԱՂՋԻ ՊԱՏՃԱՌԱԾ ՎԵԱՄԸՆ

Գաղձը, որպես պարաղիս մոլախոս, անշուշտ մեծ վաս է պատճառում կուլտուրական ցանքերին։

Մեր փողձերը ցույց են տվել որ երբ մեկ կելովը ամավատի սերմի մեջ 800 հատ գաղձի սերմ է եղել ապա զբա հետեանքով մեծ չափով իջել է կտավհատի և ցողունի և սերմի բերքը։ (Ցողունի քաշը իջել է երկու անգամ, մեկ բույսից ստացվող սերմի քանակը պակասել է 1,5 անգամ, ցողունի երկարությունը՝ ^{1/4} անգամ)։ Վարակված ցողունը դառնում է փխրուն, քիչ է հաստանում և դառնում անպետք՝ թելի համար։ Սերմի և թելի բերքը կորուստից բացի ընկնում է նաև կտավհատի յուղի տոկոսը։

Երեքնուկի գաղձը գլխավորապես մեծ վաս է պատճառում երեքնուկի և առվույտի ցանքերին, որից երեքնուկը և առվույտը դառնում են կոշտ, կորցնում են հյութալիությունը, առնասունների համար անգուք համ են ձեռք բերում և զրկվում են մեծ մասսա տալու հնարավորությունից։ Այսպիսով ընկնում է խռոտի և քանակը և որոկը, մեծ չափով ընկնում է նաև սերմի բերքը։

Միասունի գաղձը գլխավորապես մեծ վաս պատճառում է խաղողի վաղերին։ Ունենալով հաստ թերանման ցողուն՝ խիստ փաթաթվում է խաղողի, վաղերին, զրկում նրան ասիմիլացիոն մակերես սից, թուլացնում վաղը, իսկ խաղողի պտղին տալիս է քիչ դառը, թթվաշ, անգուք համ Պակասում է ողկույզների թիվը և քաշը։ Հին վարակված վաղերը շատ կարճ կյանք են ունենում և երեքշորս տարուց հետո մնունում են։ Գաղձով վարակված կուլտուրական բույսերը ոչ միայն զցում են իրենց բերքի քանակը և որակը, այլև զժվարացնում են բերքահավաքը և բերքի հետագա մշակման աշխատանքները։

¹ Cuscuta.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԾ-ՈՒՄ ՏԱՐԱԾՎԱԾ ԳԱՂՁԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայաստանում տարածված է գլխավորապես գաղձի հինգ տեսակ՝

1. Երեքնուկի մանրասերմ

2. Դաշտային

3. Կտավիհատի

4. Միասնի

5. Եվրոպական

Զնայած նրան, որ գաղձի տարբեր տեսակներն ունեն իրենց հատուկ տեր-բույսերը, այնուամենայնիվ նրանք անցնում են ինչպես կուլտուրական, այնպես էլ բազմատեսակ մոլախոտերի վրա, այն տարբերությամբ, որ իրենց տեր-բույսերի վրա ավելի լավ են աճում, ավելի արագ են բազմանում, տալիս են հյութալիք ցողուն, ավելի պաղաքեր են լինում ու մեծ խիտօջախներ են կազմում, քան այլ բույսերի վրա:

ԱԹԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Երեքնուկի մանրասերմ գաղձը ապրում է երեքնուկի, առվույտի և սրանց ընտանիքին պատկանող մի քանի այլ բույսերի վրա: Այս տեսակը հայտնաբերվելէ Երևանի, Վեդիի, Հոկտեմբերյանի, Արտաշատի, Զանգիբրասարի, Մոհիմանավանի շրջաններում, կուլտուրական և վայրի առվույտի, երեքնուկի, կարտոֆիլի, գարուցանքերում և այս ցանքերին շրջապատող մի շարք մշակուսերի վրա: Բազմանում է սերմերով և տարածվում է վիզնուտիկ ճանապարհով՝ վարակված բույսերի ցողունների և ճյուղերի միշտողով: Մերման ընկնելով հողի երեսին՝ տալիս է մի քանի սանտիմետր երկարությամբ ծիլ և կպչում է տեր-բույսին,

Ցողունը բարակ է, թելանման, կարմրավուն իր վրա կրում է մանր, սպիտակ, ծաղիկներ, որոնք հավաքված կնձիկներ են կազմում: Հայտնատանում տարածված ձևերի կնձիկները կազմված են լինում 1—32 ծաղկեց: Բույսը ծաղկում է հունիսի սկզբներից մինչև ուշագույն աշուն: Այս բույսը կարող է շատ կարճ ժամանակում ծաղկել և առատ ու շուտ պաղակալման անցնել: Մեր փորձերում առվույտի բույսերը վարակված են եղել գաղձի

այս տեսակով։ Առվույտի մի մասը հնձվել է ոչ գետնի
մակերևսին մոտ, այլ վերևից և թողնվել է միայն ցածի
հաստ ու կոպիտ ցողունացին մասը։ Հնձված առվույտի վրա ապ-
րող գաղճը շատ կարճ ժամանակում անցել է ծաղկման և արագ
ու առատ պտղակալման, մինչդեռ նրա կողքի չհնձված առվույ-
տի վրա ապրող գաղճի ծաղկումն ու պտղակալումը տեղի է ու-
նեցել բավականին երկար ժամանակում։ Այս երեսույթը գաղճի
կողմից ինքնապաշտպանության միջոց է հանդիսանում։ Հետե-
ղապես, որպես պայքարի լավագույն միջոց գաղճով վարակված
առվույտի և երեքնուկի ցանքերի առանձին օջախների կամ ամ-
բողջ գաշտի բույսերը նախքան գաղճի ծաղկելը պետք է քաղել
որքան կարելի է ցածր՝ հողի մակերևսից մոտ երեք սանտի-
մետը բարձրությամբ։

Պառզը տուփիկ է, երկու բնանի, յուրաքանչյուր բնում
երկուական սերմ է նստած։ Սերմը կրորավուն է, կողավոր, մոխ-
րագույն կամ շագանակագույն, ծածկված մուգ կետերով, մակե-
րեսն անհարթ է, խորդուքորդ 1000 սերմի քաշը 0,3 գրամ է.
երկարությունը 0,8 մմ է, լայնությունը՝ 0,7։

Մեկ կելովքամը պարունակում է 3.300.000 հատ սերմ։ Մեկ
բույսը տալիս է մինչեւ 2500 սերմ։ Սերմերը շատ գիմացկուն
են և երկարակյաց։ Հողում իրենց ծլունակությունը պահպա-
նում են մինչև 10 տարի և նույնիսկ կենդանիների մարսողա-
կան օրգանով անցնելուց հետո էլ իրենց ծլունակությունը չեն
կորցնում։

2. Գաշտային գաղճ։ Սա սովորական գաղճն է, կամ երեքնու-
կի խոշորասերմ գաղճը, հայտնաբերվել է Երևանի, Վեդիի, Հոկ-
տեմբերյանի, Արտաշատի, Ստեփանավանի և Զանգիբարասարի շրա-
ջաններում։ Ապրում է երեքնուկի, առվույտի, վիկի, կարտոֆի-
լի, ճակնդեղի, գաղարի, ձմերուկի, բիբարի, ուհանի և բաղրը-
ջանի վրա, մոլախոտերից՝ թելուկի, ճարճատուկի, դյուլումի
ծաղկի, քաղցր-բիմնի և մի շարք այլ մոլախոտերի վրա։

Յոկունը թելանման է, բարակ ճյուղավորվող, գույնը բաց
դեղնավուն, ծաղկավիթթությունը խիտ փունջ է, հաճախ միատեղ
հավաքված կնծիկների տեսք ունի, հատկապես պտղակալման
ժամանակ։ Ծաղիկները մասն են, վարդագույն, վարսանդը երկ-
սանանի է, գնդաձև սպիռվ, որով տարբերվում է մնացած տե-

սակներից: Պուռագլը տուփիկ է, կորավուն կամ քիչ սեղմված: Տուփիկը բաժանվում է բների, յուրաքանչյուր բնում նստած և ներկու սերմ, ամբողջ տուփիկում՝ չորս սերմ: Սերմի գույնը գեղին կամ շագանակագույն է, մանր բցտիկավոր մակերեսով, օվալաձև է կամ կլորավուն, քիչ սեղմված, կարճ թեք սպիռվ: Սերմի երկարությունը մեկ ու կես միլիմետր է, լայնությունը 1,2 մմ, հաստությունը 0,8 մմ. ծլման համար պահանջում է օպտիմում $20-23^{\circ}\text{C}$: Այս գեղքում սերմերը ծլում են երեք օրում, իսկ դաշտային պայմաններում՝ մինչև 24 օրում:

3. Կտավիատի գաղճ. Տարածված է Լենինականի, Կոտայքի և այլ կտավիատացան շրջաններում: Ապրում է զլխավորապես կտավիատի և իրեն շվագատաղ մոլախոտերի, հատկապես կտավիատի ցանքերի մոլախոտերի վրա: Վարակում է նաև կանեփին, ձակնդեղին, երեքնուկին և առգույշին: Կտավիատի սերմացուք միջոցով դադիմ սերմերը տեղափոխվում են դաշտ: Կտավիատի և գաղճի սերմերը ծլում են միաժամանակ և տալիս են ցողուն: Գաղճը վաթաթվում է կտավիատի ցողունի շուրջը և կտրվում հողից:

Ցողունները չեն ճյուղավորվում, բարակ թելանման են, բայց երեքնուկի գաղճի ցողունից քիչ հաստ, գույնը դեղնականաչափուն է, ծաղիկի պսակը գեղնագույն է: Բույսը ծաղկում է հունիսին և օգոստոսին: Սերմերը անհավասարակողմ կտրավուն են, փոքր կողմից ունեն երկու ներս ընկած հարթոթյուններ, որոնք միանում են սերմի կենտրոնում մի ուսուցիկ երկարավուն սպիռվ: Հիմքում ունենում են փոփիկ: Սերմի մաշկը կնճռուափած չէ, փայլուն չէ, գույնը կանաչ մոխրագույն է, ծածկված մուգ կեսերով. պատուղը տափիկ է և բացվող չէ: Ամբողջական առոփիկը, ընկնելով սերմացուի մեջ, կալսելու ընթացքում բացվում և վարակում է սերմացուն: Կիսանասուն սերմերը ընդունակ են հնձից հետո հասունանալու և տալու բարձր ծլունակությամբ սերմեր: Այս գաղճի առաջ ծիելու համար պահանջվում է $20-23^{\circ}$ ջերմություն, որի գեղքում սերմերը տալիս են $99-100$ տոկոս ծլունակություն, $14-18^{\circ}\text{F}$ դեպքում $64^{\circ}/_0$ ծլունակություն, իսկ 70°F գեղքում սերմերը չեն ծլում: Կտավիատի գաղճին յուրահատուկ է երկուական սերմ իրար կպած: Սերմի երկարությունը 1,3 մմ է, լայնությունը 1,0 մմ, մեկ կգ պարու-

Նակում է մոտ 1650000—2850000 հատ գաղձի սերմ: 1000 սերմի քաշը 0, 96—0, 64 գրամ է: Կտավհատի գաղձը համեմատած մանրասերմ երեքնունի գաղձի հետ աչքի է ընկնում բարձը զիմացկունությամբ:

4. Միասնի գաղճ. Տարածված է Երևանի, Վեդիի, Հոկտեմբերյանի, Արտաշատի, Աշտարակի, Եջմիածնի, Զանգիբրսարի և Մեղրիի շրջաններում: Մեզանում ապրում է զլխավորապես խաղողի տեսակների վրա, խաղողի այգիներում գտնված է նաև դեղձենիների և մի շաքը մոլախոտերի վրա (ճարճատուկ, վայրի գաղցր, քաղցր լին), գյուլումի ծաղիկ և այլն): Բույսի ցողունը հաստ է, թիւանման ճյուղավորվող, ծաղիկները մանր են, կազմում են ողկույզանման ծաղկափթթություն, ունեն վարդագույն, համարյա սպիտակ գույն: Վարսանդը միասնի է, պտուղը տուփիկ է, ձվաձև, տուփիկի վերեկ մասը կափարիչ ունի, որը բացվող է: Յուրաքանչյուր տուփիկում նստած է մեկ երբեմն երկուական սերմ, խիստ հազվադեպ է լինում երկուսից ամենին: Մերմերը ձվաձև են, ծայրի մասում ունեն երկարագույն քթիկ, թույլ կնճռոտած: Գույնը մեջքի կողմից մուգ շագանակագույն է, փորի կողմից բաց մանիշակագույն: Մերմի երկարությունը 3,0 մմ է, լայնությունը 1,5 մմ, ծաղկում է հունիսի սկզբներին, հուլիսին:

5. Եվրոպական գաղճ. Հայտնաբերվել է Երևանի, Կալինինոյի, Մեղրիի, Դորիսի և այլ շրջաններում: Ապրում է կանեփի, մոշերի, վարդենիների, եղինջի, եղիզնի և այլ բույսերի վրա, որոնցից և անցնում է կուլտուրական բույսերին: Ցողունը գեղնագույն է, թույլ կարմրավուն, բարակ, ճյուղավորվող: Ցողունը կրում է իր վրա մանր սպիտակ ծաղիկներ, որոնք կնծիկներ են կազմում և յուրաքանչյուր կնձիկ պարունակում է 1—18 ծաղիկ: Մաղկութը տեղի է ունենում հուլիսին: Պառվը տուփիկ է, ձվաձև կամ տափակ կլորավուն, կողավոր: Տուփիկի երկարությունը 3 մմ է, լայնությունը 2,5—3 մմ: Մերմը զնդաձե կամ օվալաձև է, մաշկը կնճռոտած, մոխրագույն, միխրաշագանակագույն, ծածկված մուգ գորտնուկանման բաւիկներով: 1000 սերմի քաշը մոտ 0,5 գրամ է, սերմի երկարությունը 1,1 մմ է, լայնությունը 0,9 մմ:

ԱՐՎՈՒԹՅՈՒՆ ՑԱՆՔԵՐՈՒՄ ԳԱՂՁԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-ԹԻՄ

Մեր էքսպեդիցիոն հետազոտությունները առաջմա պարզել են, որ նկարազրված գաղձի հինգ տեսակները տարածված են Հայաստանի Հոկտեմբերյանի, Աշտարակի, Վեդիի, Էջմիածնի, Արտաշատի, Զանգիբրասարի, Բերեխյի, Կոտայքի, Մեղրիի, Ղաղանի, Գորիսի, Միայնակյանի շրջաններում։ Տարածվածության չափը տարբեր շրջաններում տարբեր է, այդ մասին վկայում են հետևյալ տվյալները։

Տարբեր շրջաններում վերցրած առվույտի սեմագույի մեջ գոնզած զաղձի սեմենի բնիկ մեկ կիլոգրամում, ըստ

1944—1946 թ. բ. ուսումնասիրությունների

№	Շրջան	Միջինը	Մինիմումը	Մաքսիմումը
1	Հոկտեմբերյան	142500	8000	339000
2	Արտաշատ	5880	400	58000
3	Կոտայք	5200	2400	20600
4	Միայնակ	4000	—	—
5	Աշտարակ	1800	—	—
6	Աղեղեկով	880	600	2400
7	Էջմիածնի	5851	2800	17000
8	Զանգիբրասար	6466	3400	8'000
9	Բերեխ	60733	800	97400

Այս թվերը գուրս են բերված 92 գյուղերից ստացած սերմանյութերի հետազոտության տվյալներից։ Թվերը ցույց են տալիս, որ վերոնիշյալ շրջանների առվույտի ցանքերի վարակվածությունը գաղձով խթան մեծ չափերի է հասնում։ Մեր թված շրջանների սերմագույի վարակվածության ամենափոքր չափը ևս խթան մեծ է, քանի որ ըստ պետական կոնդիցիայի մեկ կիլոգրամ սերմի մեջ նույնիսկ մեկ հատ գաղձի սերմ լինելու գեպքում այլպիսի սերմացուի ցանքը արգելվում է, բացի սերմացուի հետազոտություններից։ Վարակվածության չափը որոշվել է չորսրայլան սիստեմով՝ այսինքն այն գաշտերը, որոնք համատարած վարակված են եղել գաղձով, նշանակվել է 4 բալ, համատարածից ավելի քիչ վարակվածությունը՝ 3 բալ, եթե դաշտում 2—3 օջախներ են հայտնաբերվել, նշանակվել է 2 բալ։

իսկ ամենքից քիչ վարակվածությունը նշանակվել է 1 բար
Այդ իսկ տեսակետից շրջանները բաժանված են երեք խմբի:

Հետազոտված շրջաններից Հոկտեմբերյանի, Արտաշատի,
Քերիայի, Զանդիքասարի և Վեղիի շրջաններում վարակվածու-
թյունը համուռ է չորս բալի, եջմիածնի, Կոտայքի, Սփյանի,
Աշտարակի, Ազգպեհկովի շրջաններում համուռ է երեք բալի,
իսկ Գորիսի, Մեղրիի, Ղափանի շրջաններում՝ երկու բալի:
Գաղձը քիչ է տարածված նաև Արարանի շրջանում: Այս տար-
բերությունը բացարձուում է նախ և առաջ կլիմայի տարբերու-
թյամբ: Ազելի տաք և ոռոգող ջրով ապահովված շրջաններում,
որտեղ կա փարթամ բուսականություն, գաղձը ավելի առատ է
տարածված, ինչպես օրինակ Արարատյան հարթավայրում, իսկ
լեռնային այն շրջաններում, որտեղ և ջերմությունն է պակաս և
չորային է, գաղձը ավելի քիչ է տարածված: Այդպիսի շրջան-
ներից են Արարանը, Աբսիանը, Ազգպեհկովը: Գաղձի տարած-
ման չափը որոշող մոռենաներից մեկն էլ գաղձով վարակվող
բույսերից ցանքատարածությունների մեծությունն է:

Այս շրջաններում, որտեղ մշակվում են առվույտ, կտավ-
հատ և խաղողի այգիներ, գաղձը ավելի շատ և առատ է տա-
րածված:

Վերջապես մեծ նշանակություն ունի նաև գաղձի զեմ տար-
փող պայքարի ինտենսիվությունը: Այն շրջաններում, որտեղ
սիստեմատիկաբար պայքարում են այս վնասակար մոլախոտի
գեմ, գաղձը ավելի թույլ է տարածվում, օրինակ՝ Գորիսի, Ղա-
փանի, Արարանի շրջաններում:

ԳԱՂՁԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻՋԱՑՆԵՐԸ

Գաղձը պատկանում է գժվար ոչնչացվող և սուր մասսակար
կարանտին մոլախոտերի թվին, այդ իսկ պատճառով սրա գեմ
հաջող պայքար կազմակերպելու համար անհրաժեշտ է բացի սո-
վորական պայքարի եղանակներից, կիրառել նաև հատուկ մի-
ջոցառություն: Պետք է սահմանել ընդհանուր հսկողություն ցան-
քերի և այգիների վրա և գաղձ հայտնաբերելու դեպքում
իսկույն ոչնչացնել: Որքան շուտ ոչնչացվի այն, այնքան ավե-
լի մեծ կլինի պայքարի էֆեկտը և փոքր՝ նրա պատճառած
վնասը: Պայքարի մեթոդները հետևյալներն են՝

1. Եթե առվայրացի, սերմացուն վարակված է գտղձի սերմերով, ոչ մի կերպ չի թույլատրվում ցանելու այն մինչև մաքրման չենթարկվի «Տըիֆոլին» էլեկտրամագնիսական կամ այլ մեքենաների միջոցով մինչև արսորուտ մաքրության հասցնելը: Այդպիսի սերմացուն սուսպումից հետո միայն կարելի է թույլատրել ցանքի համար:

2. Կուրտուրական բույսերի սերմերը գաղձի սերմերից մաքրելուց հետո անտեսական արժեք չներկայացնող թափուկները մեծ խնամքով պետք է հավաքել, այբու կամ վրան ըլուրակիր լցնել և մեկ մետր խորությամբ թաղել հողի մեջ:

3. Բոլոր պարկերը, բրեղենատները և այլ ինվենտարը, որոնք շփում են ունեցել գաղձի սերմերի կամ գաղձով վարակված սերմացուի հետ, անպայմանորեն պետք է եփել եռացող ջրի մեջ: Կարելի է ախտահանել նաև տաք գոլորշիներով:

4. Գաղձի սերմերով վարակված սերմացուն պետք է պահել առանձին շենքերում, մաքրու սերմացուից հեռու և բոլոր նախազգուշական միջոցները կիրառել, որպեսզի մաքրու սերմացուն վարակվելու որևէ հնարավորությունից գերծ լինի:

5. Մեկ շրջանից մի ուրիշ շրջան, առանց կարանտին տեսչության թույլատրվության և համապատասխան պրոֆիլակտիկ միջոցների կիրառման, գաղձով վարակված սերմ, տնկանյութ, գարման, խոյ և նույնիսկ ինվենտար փոխադրելլը պետք է արգելել երբ այս բոլոր միջոցառումներից հետո ցանքերում նորից հայտնաբերվում է զաղձ, նման գեղաքերում սերմերի մաքրման և նախազգուշական միջոցառումների հետ միասին պետք է լայնորեն կիրառել նաև պայքարի ակտիվ (ոչնչացնող) միջոցներ:

6. Բոլոր ցանքերը պարբերաբար ստուգելուց և գաղձ հայտնաբերելուց հետո գաղձով վարակված առանձին օջախները նախքան գաղձի ձաղկելը պետք է քաղել որքան կարելի է ցածր (մոտ երեք սմ բարձրությամբ), քաղած մասսան տեղում կույտ անել, զրան նավթ լցնել և այբու իսկ հողը վարել 25—30 մմ խորությամբ և ցեղ թողնել: Նույնպիսի աշխատանք պետք է կատարել նաև վարակված օջախների շրջապատում մոտ 1,5—2,0 մետր լայնությամբ:

7. Գաղձով վարակված օջախները կարելի է սրսկել երկաթ-արջասպի 15—18 °/ο-նոց լուծույթով, որը ուժեղ ազդե-

ցություն է գործում զաղձի վրա ձիշա է, տեր բույսը նույպիս
ակզբանական շրջանում խիստ տուժում է, բայց շատ շուտ վերա-
կանգնում է իրեն, հատկապես առվույտը:

8. Ամբողջ զաշտը քաղել հողի մակերեսին մոտ, քաղած
մասսան զիզել տեղում և օգտագործել իրբեւ խոսր չողի մակե-
րեսին խիստ մոտ կատարվող, առանց խարսկների հաճախակի
հունձը և հնձած մասսայի մաքուր հավաքը ամբողջապես ոչըն-
շացնում է զաղձին, որովհետև ցածր խոզանի վրա զաղձ չի լի-
նում: Բարձրացող աճուրդի և խոզանի վրա պետք է սահմանել
խիստ հսկողություն և զաղձ հայտնաբերելու գեպքում լրացու-
ցիչ կերպով քաղել և մասսան այցել: Եթե այս միջոցների կի-
րառումը չի ապահովում զաղձի լիկիդացիան, ապա ավյալ
հողամասը ցանքաշրջանառության մեջ պետք է զբաղեցնել
այսպիսի բույսերով, որոնք չեն վարակվում զաղձով: Քանի
որ զաղձի սերմերը իրենց ծրւնակությունը հողում պահում
են երկար, ուստի զաղձով վարակված դաշտում առվույտի ցանք
չպետք է կատարել 8—10 տարի, իսկ կտավհատի ցանք 7—8
տարուց շուտ:

9. Կտավհատի ցանքերում զաղձ հայտնաբերելու գեպքում,
անկախ վարակված տարածություն չափից, կտավհատը պետք է
հավաքել (արմատախիլ անել) սերմնաստուփեր կազմելու շրջանում
և պահել առանձին: Եթեքնուրդի զաղձով վարակված կտավհատի
հավաքը պետք է կտավարել մասսայական հավաքից 4—5 օր
առաջ: Հավաքից անմիջապես հետո հողը պետք է վարել նախա-
գութանիկ ունեցող գութանով վարելաշերտի ամբողջ խորու-
թյամբ, իսկ կտավհատի մշակման հետագա աշխատանքները
(սերմ ստանալը, թրջոց գնելը, կեղելը հանելը, սանրելը և այլն)
պետք է կտավարել միանգամայն առանձին:

10. Անհրաժեշտ է սերմացուի, ցանքի հողի վրա կտավր-
վող հսկողությունից բացի, հսկողության տակ վերցնել նաև
անկարատները, բանջարանոցները, խալողի, պաշտու ծառերի
այդիները և հատապտուզների տնկանությունը, որոնք նույնպես կա-
րող են զաղձով վարակված լինել և վարակի տարածման աղ-
բյուր գոռնալ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Ել
Նախարան	3
Գաղձի ընդհանությունը	5
Գաղձի պատճեռած վասը	6
Հայկական ՍՍՌ-ում տարածված գաղձի ակները	7
Առվնելյափանը բանքերում գաղձի տարածվածությունը Հայկական ՍՍՌ-ում	11
Գաղձի դեմ պայքարելու միջոցները	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Տեխնիկական խմբագիր՝ Մ. ԿԱՓԻՑՅԱՅԻՆ
Մրացրիչ և կոնսուլ՝ Մ. ԳԱՐՈՒՆԻՅԱՆ

Հանձնված է արտադրության 25/VIII 1947 թ., ստորագրված է տպագրական
12/IX 1947 թ., տպագր. 1 մամ., 1 մամուլում 38400 տպագրէ նիշ, Վճ օգագօ
պատ. 637, հրատ. № 456, ամբողջ 2500.

Հայկական ՍՍՌ ֆիտ. Ակադեմիայի տպարտն, Երևան, Արագյան 104

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008939

Գիւլ 2 թ.

A II
18134